ազգ քրիստոնէից միայկրաւն [1] էին լեալ, բայց չէ հնար, [2] որպէս գրեցաք, այլ զկարիլին չէ հնար խափանել։ Զի դուք իշխանք էք Հայոց և Վրաց կամաւքն Աստուծոյ, և թէ կամիք, ծանուցանէք աստուածասէր թագաւորացդ, որ արքայական իշխանութեամբ սաստ դնեն, որ ոչ [3] զեկեղեցի Աստուծոյ [4] չքակեն և զխաչ այրեն, և այսմ ժամանակիս իշխանութեամբս և յաւիտենական թագաւորութիւնն առնուն ընդ բարեպաշտ թագաւորացն ընդ Կոստանդիանոսին, ընդ Թէոդոսի և ընդ Տրդատայ և ընդ նախնի թագաւորացն իւրեանց, աստուածասիրացն Բագրատունեաց, և պսակին [5] ի Քրիստոսէ՝ ի ճշմարիտ թագաւորաց թագաւորէն, և հաստատուն ունիցեն զթագաւորութիւնն իւրեանց, բարի շառաւեղաւն, գեղեցիկ աթոռակալաւն, ի խաղաղական կեանս [6] և յաղթութեամբ

1. միակրօն.
2. չէ արժանի.
3. Օ. ոչ
4. ճայոց
5 պսակիցեն.
6. կենօք.

պատերազմաց և բարեպաշտութեամբ կեալ յաշխարհի. հանդերձ քրիստոսասէր իշխանաւքդ՝ քաղցըր կամաւք և իրաւամբ [1] դատաստանի, և առողջութեամբ հոգւոյ և մարմնոյ, և բարի անուամբ Քրիստոսի հաճոյանալ և ժառանգել զարքայութիւնն Աստուծոյ. զի և մենք վայելեսցուք ի կեանս դոցա և անթառամ և նորատունկ գաւազի [2] արքայութեան ի կենս [3] նորա ուրախացեալք [4] Քրիստոսի երկրպագութեամբ, որ է աւրհնեալ և փառաւորել [5] ընդ Հաւր և ամենասուրբ Հոգւոյն [6] այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից [7] ամէն.*

1. իրաւամբ.
2. գաւազանի.
3. արքայութիւնն ի կեանս.
4. եւ պայծառացեալք.
5. եւ փառաւորել.
6. եւ ընդ Հոգւոյն սրբոյ.
7. Ա. Օ. յաւիտենից. Բ. կրճատ.

* Բանն օրինակի վերջում. Գրեցաւ սակաւ սաստարըս այս ձեռամբ տխմարի միոյ, զոր Գրիգոր ճանանչի մականուանս սամսոնեցի, հրամանաւ Միրզի. աղաչեմ յիշել ի Տէր:

## ՎՐԻՊԱԿ *

| ԷՋ. | ՏՈՂ. | ՍԽԱԼ | ՈՒՂԻՂ |
|---|---|---|---|
| Ա. | 11 | Բանաhիւսէր | Բանահիւսեր |
| Բ. | 21 | տեսնեն | տեսան |
| » | 24 | տեսայ | տեսան |
| » | 35 | փառաւորի | փառաւորեց |
| Ե. | 32 | մեծ հովիւ էր | հովիւ էր |
| Զ. | 9 | բերեն | բերինք |
| » | 14 | վեր | վէր |
| » | 23 | բերենք | բերինք |
| Է. | 38 | փոխեցէք | փոխեր էք |

* Յունուարի տետրակում հրատարակուած Բեթլեհեմի ծաղիկ բանաստեղծութեան մէջ ձեռագրի անզգոյշ արտագրութեան պատճառով հետեւեալ սխալներն են սպրդել.